


ՇՏԵՄԵՐԸ

ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼՆԵՑ

ՀԱՏՈՐ 4.

ՄԱՐՏԻ 1. 1842.

ԹԻՒ 41.



Պետրոպոլիսի աստիճանի պալատը :

Եւ տեղս Պետրոպոլիսի մէջ շինված սառնակերտ պալատին մէկ պատկերը կայ : Ես պալատը Բնա Յագուհին շինել տրւաւ 1740ին , որ իր սաստիկ ցրտութեանը համար պինտ նշանաւոր տարի մը եղաւ : Ես պալատին նկարագիրը որուն օրինակը վերի պատկերն է , հետեւեալ տարին 'ի լոյս ընծայվեցաւ Պետրոպոլիսի մէջ պալատին ստորադրութեանը հետ՝ ուրկից մէկ քանի կտոր բան կը քաղենք :

Անիկա շինելուն կանոնը շատ սղարղ էր : Խիստ մաքուր ու պինտ թափանցիկ սառը ընտրեցին , 'Նէվա գետէն խոշոր կտորներով հանեցին ան , ու վերջը կանոնով ու կարկինով քառակուսի կըտրեցին , ու բոլոր ճարտարապետական զարդարութիւններով զարդարեցին : Երբոր բոլոր կտորներ

ը պատրաստըվեցան , զանազան տեսակ գործիքներով իրենց յատկացեալ տեղը կը հանէին զանոնք . և մէկ կտորը միւսին վրայ դնելէն քիչ մը առաջ երկուքին մէջ տեղը քիչ մը ջուր կընետէին , ու իսկոյն վրայի կտորը տակինին վրայ կիջեցունէին . ջուրը կը պաղէր՝ և ան երկուքը զրեթէ ճիշդ մէյմը կը ըլլային : Բոլոր շինուածքը բուն իսկ մէկ կտորէ ըլլալ կերեւոր , ու է վերի գեղեցիկ էր քան թէ մեծագին մարմարինէ շինված ըլլար ան . և իրաւցունէ իր թափանցկութիւնը ու կապուտակ գոյնը աղնիւ քարի մը նմանութիւն կուտար ա՛նոր :


Ես պալատին ընդարձակութիւնը երկայնութեամբ 56 ոտք էր . խորութեամբ 18 ոտք : Բարձրութեամբ մինչև տանիսը 21

ոտք . ստիպյալ բոլոր պալատէն դուրս զար-
դարանքի համար շինված բաներուն ընդտը-
ձակութիւնը 114 ոտք էր :

Երբոր դործքը կատարվեցաւ՝ հասարակ-
կութեանը հրաման տրուեցաւ առանց ար-
դելքի անոր ամէն մէկ մասին մէջը պլուր-
տելու :

Պատուհաններուն սիւնները կանանց մար-
մարիոնի նմանութեամբ ներկրված էին , ու
սառը սաստիկ սլաղ ըլլալուն ներկը շատ
տղէկ առաւ : Պատուհաններուն ապակիները
բարակ սառէ շինված էին՝ բուն իսկ ապակիի
պէս թափանցիկ ու հարթ : Գիշերը աս
պատուհաններուն մէջը ճրագներ կը վառե-
ին , ու կտաւի վրայ նկարված այլանդակ
դասուիներ կը զննէին անոնց մէջը , որոնց
թափանցիկ ըլլալուն համար հասարակու-
թիւնը մեծապէս կը զուարճացունէին անոնք :
Եւ պալատին մէջը վառված ճրագները
յատկապէս գեղեցկութիւն մը կուտային ա-
նոր . ինչու որ ըյսը միայն ապակիներէն
չէր երևար , հապա նիւթին թափանցիկու-
թենէն բոլոր շէնքը արնիւ փալփրլուն լու-
սով մը լեցուած էր :

Սեղանի վրայ խաղաղ կանոնաւոր
ողորկած ու ծակած իրեքական անիւներով
ու սայլերով պալատին առջևը կայնած է-
ին : Երկու կամ իրեք անգամ քիչ վառօդ
դործածելով մը երկաթէ ու մաքուր նետովե-
վեցաւ աս թնդանութիւնէն առանց անոնց
ձայնի . և աս գունդերը երկու մաս
հաստութեամբ տախտակ մը ծակեցին , որն
որ վախճան քայլ հեռուն տեղ մը դրված



էր : Եւ քիչէն ձախ կողմը բնական մեծու-
թեամբ փրկ մը շինված էր , ու իր կռնակը
Պարսիկ մը նստած էր՝ ձեռքը կային մը
բռնած , երկու Պարսիկ ալ փրկն դէմը
կայնած էին՝ որոնց մէկուն ձեռքը ի իզակ

մը տրված էր : Փրկն ներքի կողմը դատարկ
էր՝ ու անանկ վարպետութեամբ կարգի
դրված էր որ իր կնճիթէն քսանըջորս ոտ-
նաչափ բարձրութեամբ ջուր կը նետէր
վեր : Եւ ջուրը փրկն մօտ եղած տեղի մը
ջուրի աւաղանէն խողովակներով կուգար
փրկն փորին մէջը : Գիշերը ջուրին տեղը
վառած նաւթ դուրս կուտար , որ հրեղէն
առուի պէս խնայող զարմանալի երևոյթ մը
կը պուրջներէր : Տեսարանին աս մասը հսկի-
նշանաւոր ընելու համար՝ շինծու փրկն փո-
րը մարդ մը դրված էր , որ ատեն ատեն քա-
նի մը փողերով փրկի մանջուկի պէս ձայնէր
կը հանէր :

Հիմայ գտնք աս «մեծ խաղալիքին»
մէջի կողմը ստորագրելու : Եւ իկա միայն
երկու բարձր ու մեծ սենեակներ ունէր :
Եւ անց մէկին մէջը որ անկողնի սենեակ էր ,
մէկ սեղան մը կար հայելով մը ու ամէն
տեսակ փոշիի ու հոտաւէտ նիւթերու ա-
մաններով զարդարված . նաեւ ժամացոյց
մը , զոյգ մը աշտանակ ու մոմեր . ասոնց
բոլորը սառէ էին , մոմերը երբեմն նաւթով
կը պատէին ու կը վառէին առանց մէջնը
հալելու : Եւ սենեակին մէջը նաեւ անկող-
նարան մը կար անկողնիով . բարձրով ու
վերմակով մը պատրաստած . գեղեցիկ վա-
րպայրներ և ուրիշ կարասիքներ ու նաեւ
մէկ աղվոր կրակարան մ'ալ , որն որ սա-
ռի հասար կտորներով լեցված էր , որոնց
վրայ երբեմն նաւթ քսելով կը վառէին :

Միւս սենեակն ալ սեղանատուն կամ
հիւրի սենեակ էր , որուն մէջը աղվոր շին-
ված սառէ նստարաններ կային , ու անկիւն-
ները գեղեցիկ մարդոց մեծ արձաններ դրու-
ված էին : Եւ աս միւս կարասիքներուն վը-
րայօք չէր կարելով՝ որ կարգացողները չի
ձանձրացունենք , մէկ սեղան մը կար վրան
գեղեցիկ ժամացոյցով մը՝ որուն անիւները
ոսաւէ շինված էր , և իր թափանցիկ ամա-
նին մէջէն անոնք կը տեսնուէին :

Հոս տեղ աս մեծ զուարճութիւն տրուող
խաղալիքին ստորագրութիւնը վերջացու-
նէնք : Իր պատմիչը կը զրուցէ թէ՛ «որչափ
որ ան սաստիկ ցուրտը տեսց , այսինքն
Յունական սկիզբէն մինչև Մարտի վերջը ,

Կնճիթ . Խորհրդով : Խողովակ . օլոս : Կաւթ .
գէթ : Եւ տանակ . շաւարան : Եւ կրակ . Խորհրդով :

աս երևելի շէնքը մնաց : Ընկէ ետեւ հարաւային կողմը սկսեց թռչնալ ու շուտով քիչ քիչ հալեցաւ” :

«Բոլորովին անողուտ չեղաւ ան» կրսէ պնտմէք . «իր քակվելու ժամանակը պատերուն մեծ կտորվանքը թաղաւորական պալատը տարվեցան սառնատունները լեցունելու համար : Սակայն ասիկա իր վրայ ծախված ստակին հետ բաղդատելով շատ քիչ մէկ հատուցում մըն էր” :

Ոչխարք—Կառնիք :

Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զնոսա, և զինի իմ գան : Յօհ. Ժ. 27 :

Արածեալ զգաւնս իմ—արածեալ զոչխարս իմ : Յօհ. Ին. 15—17 :

«Ոչխարները» վայելուչ ու խորհրդաւոր օրինակ մըն են բարի մարդոցը, կամ անոնց՝ որ փրկիչը կըսիրեն ու անոր ետեւէն կերթան :

Ինչպէս որ աս կենդանիները անմեղ ու անվնաս են, անանկ ալ Վրիստոսի ոչխարները են, որ ուզելով վնաս մը չեն խտար ուրիշներուն : Ընտել հեղ ու հանդարտ են . և մենք ալ որչափ էվելօք հեղ ու խոնարհ ըլլանք նէ, այնչափ էվելօք անոնց կընմանինք ու յայտնի կըցուցնենք որ Վրիստոսի ոչխարները ենք : Ընտել կտրիչին և մանաւանդ մտադործին ձեռքին տակը կըհամբերեն, և կըսորվեցունեն մեղի՝ որ Վրիստոսի ոչխարներուն պէս համբերենք նախատինքներու առանց փոխարէն նախատելու : և սիրենք անոնք որ կանարգեն մեզ, ինչու որ մենք կըսիրենք զԱստուած : Ոչխարէն էվել լի գործածական անասուն չի կայ, որուն միւր մեր զխաւոր կերակուրն է, և անոր բուրդը մեր հանդերձին երևելի նիւթն է . և անանկ ալ մենք Վրիստոսի ոչխարները պարտինք օգտակար ըլլալ մեր ընկերներուն՝ իրենց մարմիններուն ալ ու հոգիներուն ալ բարիք ընելու ջանալով :

Կաւ ոչխարները պարզամիտ կենդանիներ են . և թէ որ հովիւը չաւաջնորդէ նէ անոնց՝ պիտի կորսըվին . և մեր բարի Հովիւը պարտի մեր աւաջնորդը ըլլալ, կամ մենք պիտի «մալորինք ու կորսըվինք», կորսըված ոչխարի մը պէս : Ոչխարները պաշտպանութիւն չունեցող կենդանիներ

են . խոյերը եղջուր ունին, բայց ոչխարները չունին ընդհանրապէս . թէպէտ իրենց գլխովը կըպատերազմին, սակայն վայրենի զաղաններուն պատառող ճանկերուն ու փառատող ակումներուն դէմ իրենց պաշտպանութիւնը տկար է . և ասանկ են Վրիստոսի ոչխարներն ալ աշխարհի մէջ՝ ուր որ իրենց հոգիներուն թշնամիները կորսընցունել կուզեն զիրենք, թէ որ ինքզինքնին անոր պաշտպանութեանը չի յանձնեն ու իսկապէս անոր հոգածութիւնը չի խնդրեն : Բայց Վրիստոսի ոչխարները «իր ետեւէն կերթան» . ինչպէս որ սովորութիւն է որ հովիւը առջեւէն կերթայ, ու ոչխարները իր ետեւէն : Ոչխարները կըճաննան իրենց հովիւին ձայնը, «և օտարի ետեւէն չեն կերթար, հապա կըփախչին անկէ» . ինչեւիցէ աշխարհքը ու մեղքը կուզեն մոլորցունել, բայց Վրիստոսի ոչխարները անոնց ետեւէն չի պիտի կերթան, կամ թէ որ յիմարութեամբ շնտակ ճամբայէն խոտորին ալ նէ, ինքը կըփնտրուէ անոնք՝ կըզանայ անոնք՝ կընորոգէ անոնք, և խիստ երջանիկ կըլլան ետ իր փարախը դառնալով ու իր պաշտպանութեանը տակը ըլլալով : Վրիստոս ալ կըճաննայ բոլոր իր ոչխարները անունովնին անգամ . հովիւները անունով կըկանչեն իրենց ոչխարները, ու անոնք ալ կըպատասխանեն իրենց անունով : Ոչխարները պարտին առատ խոտ եղած տեղը տարվիլ, և Վրիստոսի ոչխարները կըհետեւին իրենց հովիւին՝ ու անշուշտ ուտելիք պիտի գտնան, այսինքն ան բանը՝ որ կըսնուցանէ ու կըպարարտացունէ իրենց հոգիները : Ոչխարները ազնիւ ու յարգի են իրենց տէրօջ . ոչխարները և արջաւները են շատ մարդոց գանձը, ինչպէս որ ոսկին ու արծաթը . և Վրիստոս իր ոչխարները այնչափ պատուեց որ անոնք կորսըվելէն փրկելու համար բուն իր պատուական կեանքը դրաւ, ինչպէս որ ինքը կրսէ . «Իմ անձս իմ ոչխարներուս վրայ կըդնեմ» . ինքը խաչին վրայ մեռաւ, որ ով որ իրեն հաւատայ՝ չի պիտի կորսըվի, հապա յաւիտեական կեանք պիտի ունենայ : Սիր օրհնեալ փրկիչին վերջին պատուիրաններուն մէկը Պետրոսին՝ աս էր, «Արածէ իմ դառնուկներս արածէ իմ

ոչխարներս” : Ըստ «Բարի Հովիւր» կաթուղին սիրով ազէկ կըխորհէր իր ոչխարներուն մէջը եղած պղտիկին ու տկարին վրայ : Ինչպէս որ մեծին ու զօրաւորին վրայ : Քրիստոսի գաւառներուն մէջը շատ պղտի տղաքներ կան : Ինքը աս գաւառներուն վրայ սիրոյ աչքով կընայի պինտ բարեգութ ծնողքէն ալ եվելի : Իր սիրտը բոլորովին զթուծիւն է դէպի անոնց : Ինքը անոնք իր ոչխարներուն մէջը տեսնալուն կուրախանայ , արածելով անոնք կանանչ խոտերուն վրայ , այսինքն իր օրհնեալ խօսքովը ու սխառեղներովը . և իր ճամբաներուն մէջը պըտըցուցնելով անոնք :

Սիրեմ Հովիւս անուշիկ ձայնը
Իր անքուն աչքը պիտի պահպանէ ,
Իր հազարաւոր ոչխարաց մէջը
Խղճալի հոգիս , որ մոլորեալ է :

Ինքը կարած է իր ոչխարները
Կրկանէ անոնք իրենց անունով ,
Լա անոնց փափուկ պղտի գառինքը
Իր օրհնեալ զիւրկը կընդունէ սիրով :

Յիսուս ինքը « Կաւուն Լստուծոյ » կը կոչվի . ինքը հեղ էր գաւառակի պէս երբոր անորորմաբար հալածվեցաւ , թէպէտ և ինքը ուրիշ բան մը չըրաւ « բայց միայն բարիք ընելու պըտըցուցաւ » . դաւաճուց իր կրկնալը զինքը ծեծողին առանց հակառակելու . և երբոր փորձըվեցաւ ու դատաւ պարտըվեցաւ առանց պատճառի մը , և « գաւառակի պէս մեռնելու տարվեցաւ » , անատենը « ինչպէս որ ոչխարը կտրիչին տուջը լուռ կըկենայ , անանկ ալ ինքը իր բերանը չի բացաւ » : Ինքը իր անձը զոհ մատուց , ճիշտ մորթըված գաւառակին պէս , որն որ ամէն օր կըմատուցվէր Հրէից սեղանին վրայ Խորայէլացոյ մեղքերուն համար . և ետքը ալ մէյ մըն ալ նորէն գաւառինքը զոհ չըրին , ինչու որ անոնք միայն օրինակ ու նշան էին մեր փրկիչին՝ որ մեզի համար մեռաւ , որ անոր արունը անհնաբար պատուական էր , և անոր համար մէյ մըն ալ նորէն զոհ ըլլըվելու կարօտ չէր . հապա « մէկ անգամ զոհ եղաւ » . Լեբ. Ժ. 10 :

Իմ հաւատքս քու վրայ՝ Տէր
Հաստատէ որ ես զօրանամ ,
Լա իմ մեղքերս անիծաբեր
Խոստովանիմ ու ետ դառնամ :

Կարծիր էտիգ դարձիր ու տես
Ո՛վ իմ հոգիս քու մեղքերդ ,
Խաչին վրայ չարի մը պէս
Տէրը կրեց քուկին տեղդ :

Թող հաւատով ուրախանալ
Որ անէճքը վերցըված է ,
Ըն Կաւունակին սիրով փառք տանք
Որ իր սէրը մեզի շատ է :

Բնական փրկարարութեան հարցումներ :

Հոս և հոսին :

Հարց . Ինչո՞ւ համար հաւերուն ու թուռններուն հաւկիթին կեղեին մէջ կիր ըլլալ հարկաւոր է :

Պատաս . Ընոր համար որ հաւկիթին մարմինը կամ մէջը ոչ փոսփորոնեան թթու (Phosphoric Acid) ունի և ոչ կիր , որոնց երկուքն ալ հարկաւոր են թուռններուն ոսկորին կազմութեանը համար : Ս անորոյ հարկաւոր էր որ բնութիւնը ուրիշ միջոցով մը պատրաստէր աս երկու գոյացութիւնները , և ահա հաւկիթին կեղեին մէջը դրաւ զանոնք : Հաւը թխսելու նշանաւ միջոցին մէջ աս կեղեւը հետցնեալ կրբարակնայ . մինչև որ մէջի ձագը ոսկորներուն կազմութեանը համար բաւական նիւթ ընդունի անկից : Կեղեին մէկ մասը ոսկորներուն կազմութեանը կըծառայէ , և ուրիշ մասը փետուրները կըկազմէ :

Հ . Ինչո՞ւ համար հաւերը երկար առնէ հաւնոցին մէջը արգիլված մնան նէ առանց կեղեի հաւկիթ կածեն :

Պ . Ընոր համար որ հաւկիթին կեղեին կազմութեանը հարկաւոր եղած նիւթերը պարունակող հոլը չեն կրնար գտնալ անատենը : Տօքթօր Փարիզ (Dr. Paris) կըսէ թէ՛ թէ որ հաւերուն ոտքերը խորտակին , մինչև խորտակվածները բժշկըվելուն առանց կեղեի հաւկիթ կածեն . բնութիւնը մարմինին մէջը չըլլան առած բոլոր կիրը ոսկորները վերստին իրարու միացունելու համար կըգործածէ :

Հ . Ինչո՞ւ համար հաւկիթը իւղով կամ ներկով պատվի նէ երկար առնէ կըպահվի :

Պ . Ընոր համար որ իւղը կամ ներկը կեղեին վրայի ծակերը կըլցցունէ , և ասանկ հաւկիթին մէջը արտաքին օդին հետ չի կրնար հաղորդութիւն ունենալ . բայց ասով հաւկիթին մէջի սաղմն ալ չէ թէ կըսպաննուի : Ս Խոնիճն ալ նոյն զօրութիւնը ունի : Ումըր [Reaumur] ոգեղէն վեռնիճով հաւկիթները պատեց , ու երկու տարիէն ետեւ երբոր՝ զգուշութեամբ վեռնիճը մէկ դի առաւ , գտաւ որ ձագ հանելու յարմար էին անոնք :

Սիր . Գրէ՛ճ : Թախել : Գօլուլա օլնաւում :

Հնդկաստանցոց Սնապաշտութեանը հետ կապուեալ անգլիո-թիւններու ձեռք :


Եւ երեսին վրայի պատկերը կը ցուցնէ որբեւարի մը հըրկելուն համար եղած պատրաստութիւնը : Ինքը փայտակոյտին վրայ նստած է իր մեռած հրկանը գլուխը

իւ գիրկը աւաճ : Պրամիւնները կամ քուրմերը փայտակոյտին երկու կողմը կանգնած ազօթք կը սենկոր : Կտեի կողմը քանի մը կուտուռներ կը տեսնուին ու քանի մը Հնդկ

կատանցոց տուններ , ու սուքի կողմը Վանգէսին մէկ մասը կամ ուրիշ ջուր մը : Դողովուրդը հանդարտութեամբ ան տեսարանը զննելու վրայ է :

Երջանկութիւն կը համարինք մեզի ծանուցանել թէ Բրիտանիայի կառավարութիւնը ըստ մեծի մասին խափանեց աս գարշելի արարողութիւնը . բայց մեր ընթերցողներուն ուշադրութիւնը կրկին աս սովորութեանս վրայ կը բերենք՝ որովհետեւ Հնդկ կատանցոց կուտաշտութեանը յետին վատթարութիւնը կը ցուցնէ ան : Եւ տեղի նոյն ազգին սնապաշտութեանը հետ կապակցեալ զազանական անգթութիւններուն վրայ քանի մը ծանօթութիւններ կը կամենք տալ : Ենոր հակալ ըլլանք Եստուծոյ որ մենք Բրիտանիական հաւատքին երջանիկ ներգործութիւնները կը վայելենք :

Սնապաշտութեան դէէն թելադրուած շատ մայրեր տղայոց բարեմաղթութիւնը ստանալու համար ըրած ուխտերնին կատարելով իրենց աւջի նիկ զաւակը գետին մէջը



կրխեղդեն : Երբոր տղեկը երկու կամ իրեք տարու ըլլայ՝ մայրը գետը կը տանի զանիկա , սիրտ կուտայ անոր հոն մտնալու որպէս թէ պիտի լուս ան , թող կուտայ որ փնջէ յորձանքին մէջ տեղը երթայ , ու ա

նատենը կը ձգէ ողորմելի տղեկը . և անշարժ կը կենայ կընայի՝ իր խեղճամուհ կատարվող տղեն ըրած ջանքերը տեսնալով ու անոր աղաղակը լսելով : Եւ աջուց Սաւկոր կողմին մէջը կը տեսնուի որ մայրերը իրենց ողջ զաւակներնին տիտեռներուն մէջը կը ձգեն՝ որ կոկորդիլոսներուն մէկ տեսակին

Փայտակոյտ . օրուի երջանք : Կորձանք . օգնել :

է, ու իրենք կրկայնէին կրգնէին աս գազաններուն իրենց որսին վրայ բրած կռիւր, դառնաչարչար տղէկը յաջողակ գտնելով գազանին բերանը տեսնալով, ու երբոր գազանը ողորմելի անմեղին ոսկորները կը կոտորտէր ու արիւնը կըծծէր իրենք անշարժ կայնած ան տեսարանին վրայ կափշէին: Ի՞նչ պիտի ըլլայ ան Սնապաշտութիւնը՝ որ անտառին մէջը իր որսին համար Թափառող վագրէն ալ էվելի անագորոյն գազանի մը կը դարձունէ ան հալը՝ որուն դիտաւոր գերազանցութիւնը գութ և գորով է:

Հազարաւոր Հնդկաստանցիք ճամբորդութեան կելլան, հուշակաւոր տաճարները՝ ճուղիւղործեալ աւազանները՝ սրբազան գետերը՝ և ուրիշ ասոնց նման ուխտատէրները երթալու: Ըստ ճամբորդութիւններուն մէջը ամենամեծ աշխատութիւններ ու զրկանքներ կը քաշեն, շատ անգամ սովալը լուկ ըլլալով հիւանդութիւնով ու կանխահաս մահով: Կրկարծովի Թէ հարիւրաւոր անձինք կրկորսովին աս ճամբորդութիւններուն մէջ:

Հնդկաստանցոց սրբազան մատանները անբժշկելի ախտերով ախտաւորված անձերը կը քաջալերեն ինքզինքնին շրկըռնաթի կառքին անիւներուն տակը ձգել, կամ սրբազան գետի մը մէջ և կամ աս դիտաւորութեամբ արտորաստրված կրակը ձգել: Խոստանալով ասանկ անձնասպաններուն՝ Թէ վերստին պիտի ծնանին առողջ մարմինով: Այլ կրտէն Թէ՝ ասանկ ախտաւոր անձը բնական մահուամբ մեռնելու ըլլայ նէ, իր երկրորդ անգամ աշխարհ գալուն՝ ու յաջորդաբար քանի որ աշխարհ գայ մշտնջենաւորապէս նոյն ախտը պիտի ունենայ: Բազմաթիւ բորոտները ու ցաւերու ուրիշ որդիները ամէն տարի աս կերպերով կրկորսովին: Լերոսպոցի պարոն մը առտու մը իմացաւ Թէ քանի մը անձինք իր տանը մօտը փոս մը փորեր են ու մէջը կրակ վառեր են: Ընմիջապէս ելաւ ան նոյն տեղը դնաց՝ ու տեսաւ որ մէկ բորոտ մը՝ իր ախտին զայրանալէն քայելու կարող չըլլալով՝ գետինը պտուկած ինքը զինքը կը դարձունէրկոր, մինչև որ եկաւ

փոսին ու բոցերուն մէջը ինկաւ: Ընհնաւ ինչ ցաւերու մէջ իյնալով՝ սոսկալի կերպով գոռում գոչում կընէր մարդը: Սկսեց կանչել իր ընտանիքը՝ որ փոսին բոլորովին քը կայներ էին, ու աղաչեց անոնց որ բոցերուն մէջէն աղատեն զինքը: Բայց պարտաւ տեղը կը կանչէր: Իր քոյրը տեսնալով որ ձախ ձեռքը փոսին եղերքը երկնցընելով բոլոր զօրութեամբ դուրս ելալու կը ջանար, նորէն ետ հրեց անիկա փոսին մէջը, ուր որ անպատմելի ցաւերով կորսըվեցաւ, երբոր իր ընտանիքը ու աղաւանները անհոգութեամբ իր վրայ կայնէր կրնայէին: Ո՛վ Տէր, “*Ես եւս ուստի, ինչ որ երբեք իսկապէս չի լինի, բայց ինչ որ ինչպէս է*”: [Սաղմ. Գ. 20:] Յիշէ ան ուխտը, որով Հեթանոսները քու Որդիիդ տրված են իր ժառանգութիւնը ըլլալու:

Հնդկաստանցիք իրենց հիւանդները մահուան ժամուն Կանգէսին կամ ուրիշ սրբազան գետի մը եղերքը կրտանին, Թէ որ բաւական մօտ ըլլան գետին: Կետին ջուրը աւատօրէն իր վրայ կը Թափեն՝ Թէ որ անիկա կըլլու կորոյութիւն ունի, ու իր կուրծքը ճակատը ու Թեկերը անոր ցեխովը կը ծեփեն: Ինչու որ կը կարծեն Թէ Կանգէսին ցեխը անգամ մաքրողական զօրութիւն ունի: Երբոր հիւանդը հոգին տալու վրայ է՝ գետինը կը դնեն զինքը, ու ետքը մինչև կէսը ջուրին մէջը կը Թաղեն: Ըսանկով իր բոլորովին կայնող աղաւանները անապաշտական արարողութիւններով իր վերջին վայրկեաններուն զինքը կը չարչրկեն, ու մահուան ցաւերը հարիւրապատիկ էվելի կընեն: Ըստ անգամ բժշկելու հիւանդներն ալ աս բարբարոսական արարողութիւններով կանխահաս մահուան կը հանդիմանին: Սահուան անկողինին վրայ պառկող բարեպաշտ Քրիստոնէին յոյսը որչափ տարբեր է, անոր աշխարհէս ելալը որչափ սքանչելի կերպով տարբեր է:

Մարդապոհ իրենց սուրբ գիրքերուն մէկ պատուէրն է, ու ասիկա շատ կանուխ ժամանակէ Հնդկաստանցոց աւելորդապաշտութեանը մէկ մասը եղած է: Ըստ գիրքերը մարդապոհի ասոն կատարվելու արարողութիւնները կը ստորադրեն, ու շատ գե-

լազանց ըլլալ կըցուցնեն աս կերպ զոհ՝ նոխազներուն ու զուարակներուն զոհին հետ բաղլատելով ան : Հնդկաստանցիք կըպատմեն թէ ատենօք մէկ գործիք մը ունին եղեր , որով մարդ մը արձանի մը առջևը պառկած կընայ եղեր իր գլուխը կըտրել իր ոտքովը կից մը զարնելով : Ինչպէս զի պաշտօնատար մը պարոնին մէկը

հաւատարմացուց թէ ինքը տեսեր էր նաևակի մը մէջ Հնդկաստանցիի մը ինքըզնէքը զոհ ընելը . իր գլուխը նաւին մէկ կողմին վրայ դնելով՝ բոլոր ուժովը կացինով մը իր վիզին զարկաւ . և թէպէտ չի կրցաւ գլուխը մարմինէն բաժնել , բայց իր զգացումը կորսնցուցած գետը ինկաւ ու կորալ վեցաւ :

Բայց Հնդկաստանցոց զոհադործութիւններուն ամենէն սոսկալին որբեւարիները որջ երելու սովորութիւնն էր : Միայն Պէնկալայի սահմանին մէջը Ինչպիսիք աւտենակներուն հաշիւովը ամէն տարի ութը հարիւր հոգիէն մինչև ինը հարիւր հոգի ասանկ կէրվեր : Իրիտանիայի Կառավարութիւնը միայն կրցաւ խափանել աս սովորութեան մինչև հիմայ տեղի զութիւնը ատ սահմանին մէջ՝ որն որ հիմայ իր իշխանութեանը տակն է : Որբեւարիի մը էրվելուն վրայով հետեւեալ պատմութիւնը կընէ պարոն մը՝ որ ինքը ան սարփել տեսասարոնին ականատես եղեր է 1807ին Հունվարի 9ին : Իս երկրորդ պատկերին մէջը կերեայ թէ որբեւարին ինքըզնէքը կրակին մէջը կընտէկոր , որուն մէջը իր էրկանը մարմինը կէրկոր :

« Մարդուն մէկը լուր մը բերաւ մեզի թէ տուններնու մօտը կնիկ մը իր էրկանը մեռած մարմինն հետը էրվելու կըպատրաստըվէրկոր . ուստի քանի մը եղբայրներու հետ մէկ տեղ արտորացինք ան նոյն տեղը երթալ . բայց մենք զեռ հոն չի հասած փատակոյտը բոցերուն մէջը կըվառէրկոր : Սարսափելի տեսարան մըն էր ան : Հոն կայնողներուն վրայ ամենազգուշի ան



տարբերութիւն մը թեթեւութիւն մը կերեւար : Ինչպէս երբէք բան մը չի տեսայ ես որ ի

Երկրագ . Երբէք : Օգտարակ . Լէնճ Կոթիւ :

րենց վարմունքէն էվելի անասնական ըլլար : Ին ահաւելի տեսարանը ամենեւին կըօնական արարողութեան երեւոյթ մը չունէր : Կընմանէր ան անխորհուրդ տղոց խառնիճաղանճ

ամբողջին որ կատու մը կամ շուն մը մեռ-
ցունելու համար մէկ տեղ կը հաւքըվին :
Պամպուլի ձող մը՝ դուցէ քսան ոտնաչափ
երկան , գետինը ցցուած ցիցի մը կապւած
էր մէկ ծարէն , ու մէկալ ծարէն մարդի-
կը կրակին վրայ իջեցուցած էին անիկա կը
նիկին վրայով՝ որ անոր տակէն չի կարենայ
հլալու : Ողորմելի կնիկը ողջ ողջ իրենց
աչքին առջև երած ատենը անանկ անկար-
գութեան՝ թեթեւութեան ու անբանաբար
խնդալու ինկած էին որ կերևար թէ աս ա-
նագորոյն անապաշտութիւնը մարդկութեան
բոլոր նշոյլը խաւարեցուցեր էր անոնց մէ-
ջը : Բայց կրակին քիչութիւնը առաւել ևս
կէվելցունէր ան անգթութիւնը : Կերակուր
մը հիփելու համար պէտք եղած փառին
չափ չի կար վառած կրակին , որ ողջը ու
մեռածը մէկ տեղ պիտի էրեր մոխիւր ընէր :
Խողձալի կնիկին ոտքերը կրակէն դուրս ին-
կած տեսայ՝ երբոր իր մարմինը բոցին մէջն
էր : Բտենէ մը ետքը տասը կամ տասներ-
կու ոտնաչափ պամպուլի ձող մը առին ու
սկսեցին կրակը արծարծել կիսով չափ է-
րած դիւրը բոցին մէջը հրելով ու զարնե-
լով անոնց , ինտոր որ թաց փառերուն կը-
րակը կարծարծենք չեւած մասերը կրակին
մէջովը նետելով : Վերջապէս շատ մը ծե-
ծելէն ետքը դէպի վեր տնկեցին սրունքնե-
րը կրակին մէջը . ինչու որ մորթերը ու
ջիղերը ջախջախվեցան , ու ծունկերուն և
սրունքներուն ոսկորները երևան ելան : Բ-
սիկա տեսարան մըն էր որ հորկաւոր չէ ը-
սել թէ դողն սարսափի մէջ ձգեց զիս .
մանաւանդ երբոր կըմտածէի թէ անապաշ-
տութեան աս անյոյս զոհը քոնի մը բոպէ
առաջ կենդանի էր : Վայրենի դայլերուն
մարդկային մարմին մը ասանկ անդամ
անդամ գիշատելը տեսնալը զարհու-
րելի բան է . բայց տեսնալ որ աս բանը
իւր մերձաւորները ու զբայիները կրնեն՝ ո-
րոնք ժամ մը առաջ ընտանեբար իր հետը
կըխօսակցէին , ու թեթեւութեամբ մը կը-
նեն անիկա , գրեթէ անտանելի բան էր ան
ինծի : Գառնալով դէպի Պրամինին՝ որ աս
զարհուրելի դիպուածիս գլխաւոր գործա-
դիրն էր՝ քսաներկու տարեկանի չափ թըշ-
ուառական մը՝ ու ամենէն էվելի խստասիրտ

մէկը , ըսի իրեն թէ աս անագորոյն եղեւ-
նագործութիւններուն հրաման տրուող կը-
րօնքը չի կրնար Բստուծմէ ըլլալ հապա-
խաւարէն , ու խմացուցի իրեն թէ ինքը Բս-
տուծոյ ատենին առջևը պիտի ելլայ աս
մարդասպանութեան համար պատասխան
տալու : Գաղանաբարոյ կշտամբանքով լե-
ցուն ծաղրաբանութեամբ մը ըսաւ ինծի թէ
ինքը կըփառաւորի անով , ու գերագոյն
հաճութիւն մը կըզգայ ան գործը կատա-
րելուն : Պատասխան տրել իրեն թէ իր զգա-
ցած հաճութիւնը կարելի է որ իր տէրոջը՝
Սատանային զգացածին պէս չըլլայ . բայց
տեսնալով որ դատարկ էր իր հետը վիճա-
բանելը , ժողովուրդին կողմը դարձայ ու ըս-
կրսեցի անոնք յանդիմանել : Վերջերսուն
մէկը պատասխան տրեալ թէ կնիկը իր ա-
զատ կամքովը ինքըզինքը էրեց , ու թէ՛
հաճելի դործ մը կատարելու պէս փայտա-
կոյտին վրայ դնայ : Բնանկ է նէ ինչու հա-
մար ան երկան պամպուլովը միշտ կրակին
մէջը կըջանայիք պահել զինքը , հարցու-
ցի իրեն . թէ որ անանկ չընէինք , կեւար
կըփախէ՞ր , ըսաւ մարդը : Ի՞նչ կըսես ,
կրնայ ըլլալ որ մէկ մարդ մը հաճութեամբ
ըրած բանէն փախչի , ըսի իրեն : Ի՞նչէ ե-
տե թշուառական տղին դարձուցի իմ խօս-
քս որ իր մօրը փայտակոյտը բուն իսկ ինքը
բռնկեցուցեր էր : Տղան տասներկու տա-
րեկանի չափ էր : Գուն քու մայրդ սպան-
նեցիր ըսի իրեն . քու մեղքդ մեծ է : Բսի-
կա ընելու համար քեզ ստիպող Պրամինին
մեղքը մեծագոյն է , բայց քուկը ալ խիստ
է : « Ի՞նչ կրնայի ընել , սովորութիւնը ա-
սանկ է » ըսաւ տղան : « Ի՞րաւ ես , բայց աս
սովորութիւնը Բստուծմէ չէ , հապա գեւէն
առաջ կուգայ , որ կըջանայ մարդկային
սեւը կորսնցունել : Ի՞նչպէս կրնաս համ-
բերել երբոր միտքդ բերես թէ քու ողջ
մնացած ծնողդ դուն սպաննեցիր » : Կե-
րևար թէ իրեն լաված խօսքը կըզգարկոյ՝
բայց նոյն վայրկեանին ան խստասիրտ թըշ-
ուառական Պրամինը առաջ վազեց ու մէկ
դի վարեց տղան , որ ատեն անոր աչքերը
արցունքով լեցած էր : Բանի մը ուրիշ-
ներուն հետ ալ աս կերպովս խօսելէն ու
աշխարհի փրկիչին վրայով իրենց պատմե-
լէս ետքը ահով ու զգուանքով լեցուն միտ-
քով մը տուն դարձայ :

Չինաստանի քաղաքներուն վրայ : (Թիւ. 1 :

այր 1 է Ղօնթին յայտարարութեանը նայելով՝ իր ատենը Չինաստանի մէջ 160 քաղաքէն էվելի կային առաջին կարգէն , 270 քաղաք երկրորդ կարգէն , ու 1200էն էվելի երրորդ կարգէն , բայց ՚ի բազմաթիւ պարսպապատ քաղաքներէն որ աս կարգերուն մէկին մէջը չէին :

Չինաստանի քաղաքները շատ նմանութիւն ունենալով իրարու , միայն քանի մը գլխաւորները հարկաւոր է ստորագրել : Բայց ասիկա սկսելէն առաջ կրնանք նշանակել անոնց գլխաւոր երեւոյթը որ բոլորին ալ հասարակ է : Երգ՝ Չինաստանի քաղաքները շինված են կանոնաւոր գաղափարի վրայ՝ որ է քառակուսի , ուր որ տեղին դիրքը ու բնութիւնը կրնայ ընդունիլ աս ձևը : Բոլորն ալ բարձր պատերով շրջապատած են՝ մեծամեծ դռներով , որոնք գեղեցկութենէ էվել ամրութիւն ունին : Կանոնաւոր հեռաւորութեամբ աշտարակներ շինված են՝ որոնք բարձրութեամբ իւրարմէ կրտարքերին , բայց երբեմն մինչև անգամ ութը կամ ինը դստիկոններ ունին . ու իրենց ձևը երբեմն բոլորակ է , բայց ըստ մեծի մասին վեցանկիւնի կամ ութանկիւնի . և երբոր պատերազմի համար զործածվելու ըլլան ջուրով լեցուն ընդարձակ խրամ մը աշտարակները ու բոլոր պարիսպը կը շրջապատէ : Փողոցները ուղիղ գիծի վրայ են , որոնց գլխաւորները երսուն ոտքի չափ լայնութիւն ունին . բայց տուները ցածկուկ շինված գետնէն վեր հազիւ թէ մէկ յարկէն էվելի ունենանուն՝ փողոցներուն լայնութիւնը գեղեցկութիւն կամ վստմութիւն մը չունի . թէպէտ Չինաստանի քաղաքի մը ժողովրդոցը բազմախառն ամբոխին ու աղմուկին նայելով բան մը չէ այնչափ լայնութիւնը : Կանութները զարդարված են մետաքսեղէն գործուածքներով , յախճապակի անոթներով ու նկարակերտ վաճառքներով . որոնց խիստ փայլունները դուռներուն դուրսը կախված են յաճախորդները իրենց հրապուրելու համար . և աս սովորութիւնը ընդհանուր ըլլալուն համար՝ գլխաւոր փողոցներուն գե-

ղեցիկ և քիչ մը Թատրոնական երեւոյթ մը կընծայեն : Ըմէն մէկ խանութի ճակատը մեծ նշանատախտակ մը կախված է , որ կամ ոսկեգօծած կըլլայ , և կամ բաց դուռով մը ներկած ու փայլեցուցած . ու խանութին մէջը ծախված գլխաւոր նիւթերուն անունը վրան գրված է հանդերձ մտացածին նշանով մը : Ըս գեղեցիկ նշանատախտակները որ հաւասար հեռաւորութեամբ փողոցներուն երկու կողմը կախված են՝ բոլոր ճամբուն երկան սինազարդ երեւոյթ մը կընծայեն , որ սուսաւ զուարճալի է քան թէ գեղեցիկ :

Մարդօ փօլոյի ստորագրութիւններուն մէջէն կրնանք առնել Վինսէ կամ շանկ չիւֆու , և Թաթու կամ փէքին քաղաքներուն ստորագրութիւնները :

Ըսոնց առաջինը Վինսէ՝ որ կրնանակէ « Նըկնային Վաղաք » . Մարդօ փօլ կը ներբողէ անիկա ըլլալ « աշխարհի մէջ ամէն քաղաքներուն նախապատիւը՝ մեծութեան ու գեղեցկութեան մասին , ինչպէս նաև իր բազմաառաջ զուարճութեանցը՝ որոնք անոր բնակիչին ինքզինքը զրախտը ըլլալ երեւակայել կուտայ » : Ընտոներ իր շրջապատը հարիւր 1 է * ըլլալ կըսէր , լայն երկան փողոցներով ու մեծամեծ հրապարակներով կամ շուկաներով իր անհամար ժողովրդոցը համեմատ : Ըս քաղաքը շինված էր անուշ և յստակ ջուրի լիճի մը ու մեծ գետի մը մէջ տեղը , որ զանազան մեծ ու պզտիկ ջրանցքներով ամէն կողմը կերթար ու քաղաքին բոլոր աղտեղութիւնը կառնէր կրտանէր լիճին մէջը , և վերջապէս անկից ալ ծովը : Ըս ջրանցքներուն վրայ գրեթէ անհամար կամուրջներ կային շինված . առանց աս կամուրջներուն անհրնար էր մէկ տեղէ մը ուրիշ տեղի մը հետ ցամաքային հաղորդակցութիւն ընել : Ընոնք որ գլխաւոր ջրանցքներուն վրայ ձգված էին ու քաղաքին գլխաւոր փողոցները իրարու կը հաղորդէին , այնչափ բարձր և անանկ աղէկ շինված կամարներ ունէին , որ նաւեր կրնային անցնիլ անոնց տակէն առանց վարնելու կայմին ծարը , երբոր վրաններուն կառքեր ու ձիեր կանցնէին :

Խրամ . Կենտրոն : Կախճապակի . Գործըրդ :

* Միւլ ըն 632 Ընդլաւան Խառապ է :

Լսոնցմէ երկրորդը՝ կամ փէքինը կա-
տարեալ քառակուսի ըլլալ կըստորագրէ:
Ըմէն մէկ կողմը վեց մղոն երկայնութիւն
ունէր, քաղաքին բոլոր տարածութեան
ըջապատը քսանըջորս մղոն: Պարիսպնե-
րը ինտոր որ բոլոր շինաստանի քաղաքնե-
րուն հասարակ ըլլալ ստորագրեցինք նե
անանկ էին, բայց Սարգո փօլօ կըսէ թէ
անոնց ատամնաւոր կատարները ճերմակ
կըպահվին: Քաղաքին բոլոր դադափարը
չափով ու համեմատութեամբ բաժնւած
էր, ու փողոցները այնչափ շտապ էին, որ
մէկ մարդ մը երբոր դուռներուն մէկին պա-
սին վրայ ելլոր ու իր դիմացը նայէր, քա-
ղաքին մէկալ կողմը իր դիմացի դուռը կըր-
նար տեսնալ: Գետնի վիճակները կամ մա-
սերը քառակուսի էին և ճիշտ մէկ զիծի մը
վրայ, իւրաքանչիւր մասն բաւական տեղ
տալով տուներու և իրենց դաւթներուն ու
պարտէզներուն համար: Ըմէն մէկ մասը մէկ
ցեղի մը կամ ընտանիքի մը գլուխին տրված
էր: «Եւ ահա սա կերպովն» կըսէ յիշեալ
ճամբորդը: «Քաղաքին բոլոր ներսի կող-
մը քառակուսիներու բաժնւած էր՝ ա-
նանկ որ սատրինճի տախտակին կընմանէր,
ու անանկ ճշտութեամբ ու գեղեցկութեամբ
ձևացուցած էր որ անհնար է ստորագ-
րել»: Քառակուսի պարիսպին իւրաքանչ-
իւր կողմը իրեքականէն տասներկու դուռ-
ներ ելլ ու մուտ կուտային քաղաքին,
ու ամէն մէկ դուռ 1000 մարդ պահապան
ունէր: Քաղաքին մէջ տեղը բարձրա-
բերձ աշտարակ մը կամ զանգակատուն մը
կանգնած էր. ու երբոր իր զանգակը՝ որ
կանոնաւորապէս զիշերները կըչալվէր՝ իր
երրորդ պահը զարնէր, փողոցներուն մէջը
մէկը չէր կրնար գտնուիլ որ պատիժէ ա-
զատ քնար, բայց միայն հարկաւոր դիպ-
ուածի մը համար, ինչպէս բոնքը թէ ցաւ
քաշող կնկան մը ծնուցիչ կամ յանկարծ
հիւանդացող անձի մը բժիշկ տանելու հա-
մար. և անատենն ալ հարկաւոր էր լապ-
տեր ունենալ: Գժուարին էր ազատ քնալ
բռնելէն, քանզի պահապաններուն մեծա-
քօր ժողովները բոլոր զիշերը շարունակ
փողոցներուն մէջը կըպըտըտէին: Ընտեք
որ առանց լապտերի և առանց յայտնի
պատճառի երրորդ անգամ զանգակին զար-

նելէն ետքը բռնելէն, հետեւեալ առ-
տուն դատաւորներուն առջեւ կըտարվէին
ու յանցանքներնուն համեմատ շատ կամ քիչ
ծեծով կըսպառնուէին: Պարիսպին դուրսի
արուարձանները ևս թէ որ ընդարձակաւ
թեամբ ու բազմամարդութեամբ գերազանց
չէին ալ նե, քաղաքին հաւասար էին: Ըս-
տեղվանքը կային իջևաններ, զանազան կող-
մերէ եկող վաճառականներուն բնակու-
թեանը համար:

Ըս քաղաքներուն առաջինը որ երբեմն
հարուային շինաստանի մայրաքաղաքն էր՝
ու Սարգո փօլօյի ատենը ինքնակալին ար-
քունեացը բնակարանը, անատենէն ՚ի վեր
շատ ցածցաւ ու իր անունը փոխվեցաւ:
Ըսու ամենայնիւ Հանկչիւֆու քաղաքը
նոր ճամբորդները կըստորագրեն իբրեւ ա-
հագին ընդարձակութիւն ունեցող տեղ մը՝
բազմութիւն ջրանցքներով, ու տակաւին
ժողովուրդով լեցուն: Փողոցները թէպէտ
և նեղակալ՝ բայց սալալատակ յօրինված
են, ինտոր որ Վիենտիկցի ճամբորդին օ-
րովն ալ անանկ էին: Հիմայ ալ անատե-
նին պէս բարձր կամուրջներուն ու աշտա-
լակներուն վրայ զիշերը պահապաններ
դըրված են կրակի համար հսկելու և իմաց
տալու ու ամէն օգնութիւնները ընելու որ
հարկաւոր է ասանկ տեղի մը՝ ուր որ բոլոր
տունները փայտաշէն են: Ըմէն տունի դուռ-
սի դին տանուտէրը պարտաւոր է տունար
մը կամ գրուածք մը կախել, որ կըպա-
րունակէ իր ընտանեացը իւրաքանչիւր ան-
ձին անունը, թէ արուններուն և թէ եգե-
րունը: «Երբոր մէկը միւռնի կամ տունը
ձգէ» կըսէ Սարգո փօլօ, անոր անունը
կաւրովի, ու մէկը ծնանելուն անոր անունը
կըգրվի ցանկին մէջ: Ըս միջոցովս նահանգ-
ներուն մեծ գործակալները ու քաղաքնե-
րուն կառավարները միշտ կատարելապէս
տեղեակ են բնակիչներուն որչափութեանը:
Պէտք է գիտնալ որ սա վերջի յիշված
կարգադրութիւնը՝ ինչպէս նաև կրակի
պահապանները շինաստանի բոլոր մեծ
քաղաքներուն հասարակ է:

Քենսիի կամ Հանկչիւֆույի լիճին գե-
լիւրաքան. Գալը: Սալայատակ. Լուս. Գե-
լիւր:

դեցկութեանը ու յստակութեանը ու անոր բոլորտիքի տեղերուն զուարճալիութեանը վրայ բոլոր նոր ճամբորդները համաձայն են: Ի՞նչին մէկ կողմը աւերակ կռատուն մը կայ որ շատ գեղեցիկ տեսարան մը կը ձևացունէ: Եւ շնորհաբար ութանկիւնի է՝ կարմիր ու գեղին գեղեցիկ քանդակագործ քարերով կազմուած կատարեալ չորս յարկով, բայց ի՞նչ գմբեթէն որ ժամանակին հնութեանէ կըմաշէ կերթակոր, շատ մեծ ծառեր բուսած են անոր վրայ ու 200 ոտք բարձրութիւն ունի: Եւսիկա կըկոչվէր աշտարակ Որոտաձայն Հովերու, որուն որ կըկարծվի ընծայված ըլլալ. 2500 տարվան հին ըլլալ կըհամարվի:

Չինաստանի մայրաքաղաքին հիմնական գիծակը հետեւեալ թըւոյն մէջ պիտի ստուգարըվի:

Օճողքներն ու վարժապետներն
բազմալեւաններն մը:

Օճողքները ու վարժապետները իրենց զաւկներուն ու աշակերտներուն յառաջադիմութեանը համար բրած ջանքերն անյաջող երեւոյն համար երբեմն գրեթէ կըբռնին կըմնան: Եւսկերտին կամ զաւկին դասը կըկին և կըկին կըտրվի իրեն, բայց տակաւին կըթըւի որ քիչ կամ ոչինչ տպաւորութիւն բրած է անոր մտքին մէջը, ու սիրտը կոտրած վարժապետը կամ ծնողքը կըպատրաստվի իր աշխատութեանն դադարիլ՝ ու ըսել, ոչինչ տեղը ես իմ կարողութիւնս ծախեցի աս տղին վրայ: Բայց ասիկա սխալ կարծիք մըն է, ու ամենին տեղի տալու չէ անոր:

Ծառը ժամանակ պիտի ունենայ մեծնալու: Մարդկային սեռը մանկութենէ մարդկութեան կըյառաջանայ միայն ծանր ու կարգաւ առաջ երթալով: Եւսիկա ինտոր որ մարմինին վրայով ճշմարիտ է, անանկ ալ մտքին վրայով: Մարդու բարոյական վարքը նոյն կերպով կըծեւանայ և շատ անգամ անգգաւի աստիճանով մը կըյառաջանայ ան: Մեր երկնաւոր Հայրը՝ աշխարհիս մեծ վարժապետը իր զաւկները կըվարժէ խրատ խրատի վրայ ու պատուէր պատուէրի վրայ տալով անոնց: Եւսդադար կըտրվեցունէ, բայց վախճանին եր-

կար կըսպասէ: Եւսհնար է մէկէն ի մէկ հասնիլ ան վախճանին որուն համար որ և իցէ կերպ բոլոր վարժութիւնները կըտրըվին. ոչ ալ դիւրին է կամ հնարաւոր է ինչ և իցէ տոնէ գիտնալ թէ վարժութեան ընթացքին մէջը որչափ շատ կամ օրչափ քիչ արդէն կատարվեցաւ:

Երբոր կշառքով բան մը կշռելու ըլլաս, ինչպէս բանք թէ մէկ լիտր ցորեն ուղեւ կշռել, ցորենին հատերը մէկիկ մէկիկ կշառքին թաթին մէջը նետէ ու կըթըւի թէ զուտ մը չընէր, կշառքը տեղին չի շարժերկոր ան, մինչև որ վերջին ցորենը նետես, ու անատենը մէկէն ի մէկ կշառքին ան թաթը որ վարն էր վեր կըլայ, ու մէկ կալը վար կիջնայ: Եւս վերջին ցորենը որ հոն նետեցիր՝ կշառքը իր կողմը դարձուց: Բայց ասիկա բոլոր ուրիշներէն էվել՝ հարկաւոր էր մի, չէ. թէ որ առջի ձգված ցորեններուն մէկը պակաս ըլլար՝ ան վերջին հատիկը կշառքը աս կողմը չի պիտի դարձունէր. կշառքին մէջը ձգված ամէն մէկ հատը հաւասարապէս հարկաւոր էր, թէպէտ և կըթըւի թէ բոլոր զօրութիւնը առաջ բերողը միայն վերջինն էր: Եւսանց ասոր կշառքը չի պիտի դառնար ինտոր որ դարձաւ:

Վարժութեան մէջ ալ ասոր պէս կըլայ: Օճողքը կամ վարժապետը երկար ատեն կաշխատի ծանրագին խրատներով և ուղիղ սկզբունքներով գանձել իր զաւկին կամ աշակերտին միտքը, որ Եստուծոյ շընորհքով իր բնութեանը թիւր հակումները յաղթէ կամ դարձունէ անոնք: Եւստեն մը իր աշխատութիւնը կորսնցած կերեայ: Խրատ խրատի վրայ ու պատուէր պատուէրի վրայ կուտայ: Կրգգուշացունէ, կըյանդիմանէ, կաղաչէ, բայց դատարկ տեղը կըթըւի թէ ասանկ կընէ. բայց վերջապէս բարեյաջող վայրկեանի մը զուարճալի զարմացման մը մէջ կիյնայ, երբոր գտնայ թէ ծնողական գթով ու հաւատարմութեամբ խօսված ջերմեւանդ աղաչանքը՝ կամ ազդու յորդարանքը Եստուծոյ շնորհքով առաջ բերաւ իր այսչափ ժամանակէ ի վեր բաղձալի զօրութիւնը ու փոփոխութիւնը: Բայց պէտք չէ որ իր ջանքերուն միայն մէկին ընծայէ աս փոփոխու-

Թիւնը՝ որ այնչափ քաջալերութիւն տրուող և այնչափ ընդունելի է իր զգացումներուն : Բոլոր առջի խորատները ճամբայ կը պատ-
րաստէին ասոր . ու թէ որ անոնք տրված չըլլային աս հաճելի վախճանը բնաւ չի պիտի առաջ գար :

Երբոր մէկ մարդ մը ինքնիրեն կը մտա-
ծէ թէ երկու ճամբուն ի՞նչ ընտրէ , ատեն
մը հանդարտ կը կայնի , ու մէկին կամ մէ-
կոյին աղէկութեանը վրայով իր միտքը
ինկած խորհուրդները առաջ չեն շարժեր
զինքը , մինչև որ վերջապէս նոր խորհուրդ
մը իր միտքը գալով առաջ կը շարժէ զին-
քը : Բոլոր առջի խորհուրդներն ալ աղէկ
էին իրեն , բայց անոնց վրայ է վերջուցած
ան վերջին խորհուրդն էր որ վերջապէս իր
ընտրութիւնը որոշեց ու զինքը ստիպեց ա-
ռաջ ելթալ : Կարելի է թէ ան վերջինը
առջիններուն պէս աղէկ չէր , բայց հար-
կաւոր էր ան որ մարդը իր վերջին ընտ-
րութեանը բերաւ :

Փայտահատը հարկեր կացին կը զարնէ
ծառի մը՝ առանց շարժում մը պատճառե-
լու անոր . բայց վերջապէս առջի հարուած-
ներէն ալ տկար մէկ երկու հարուած մը
հաստաբուն կաղնին կը տատանեցունէ , ու
զետինը կը պտուկեցունէ անիկա փայտահա-
տին առջևը :

Ուրեմն՝ ո՞վ ծնողքներ ու վարժապետներ ,
Եստուծոյ ապաւինելով՝ յարատեւութեամբ
և յուսով ձեր բարի գործին մէջը յառա-
ջացէք : Չեր տալու հետեւեալ խրատը
կարելի է թէ Եստուծոյ օրհնութեամբ ան
զօրութիւնը յառաջ բերէ՝ որն որ այսչափ
ատեն դատարկ տեղը կը փնտրուէիք :

Հարաւային Լեւոնտայի Բամբաս Կաշպին
Բոյսերուն վրայ :

Բամբասի ընդարձակ դաշտը՝ որ կիյնայ
Գօրտիւխան լեռներուն արեւելեան
կողմը , 900 միլոնի չափ լայնութիւն ունի ,
ու զանազան մասերու կը բաժնրվի որ զանա-
զան եղանակներ ու բերքեր ունին : Ես մա-
սերուն առջինը՝ Պուէնսոս Լ. յուէսէն ելլալէն
ետքը՝ 180 միլոն տեղ առուոյտով ու տա-
տակով ծածկըված է . երկրորդ մասը՝ որ

450 միլոն տարածութիւն ունի , երկան խոտ
կը բուսցունէ . ու երրորդ մասը՝ որ Գօր-
տիւխան լեռանց ստորոտը կը հասնի . զած
ծառերու ու Թուփերու անտառ մըն է : Ես
մասերուն երկրորդը ու երրորդը բոլոր տա-
րին զրեթէ նոյն երեւոյթը ունին . ինչու որ
ծառերը ու Թուփերը միշտ կանաչ կը մնան ,
ու ահագին մարգագետինը իր կանաչ գոյնը
միայն մոլթ գոյնի մը կը դարձունէ . բայց ա-
ռաջին մասը տարիին չորս եղանակներովը
սքանչելի զանազանութիւն մը կը ընդունի :
Չմիւր տատակներուն տերեւները խոշոր ու
առատ են : Եւ ուրոյտը աս եղանակիս մէջը շատ
կը ճոխանայ ու կուժովայ , ու վայրենի կեն-
դաններուն ազատ համարձակ ասանկ արօ-
տի մը վրայ ճարակիլը տեսնալը խիստ գե-
ղեցիկ է : Գարունին առուոյտը կը չորնայ ,
ու տատակներուն տերեւները կը թափին :
Եւ միւս մը չանցած խիստ տարօրինակ փոփո-
խութիւն մը կը տեսնուի . բոլոր երկիրը ա-
հագին տատակներով կը ծածկըվի , որոնք
յանկարծ տասը կամ տասնըմէկ ոտք բարձ-
րութեան կելլան , բոլորն ալ լման բաց-
ված . ճամբաները երկու կողմէն կը գոցվին .
դաշտին տեսարանը կը խափանվի , մէկ կին-
դանի մը չի տեսնուիր . ու տատակները
անանկ իրարու մօտ բուսած են ու անանկ
զօրաւոր են՝ որ թէև փուշերով զինուոր-
ված չըլլան , անթափանցելի պատնէշ մը
կը ձևացունեն : Ես տունկերուն յանկարծ
բունիլը շատ զարմանալի է . և թէպէտ
պատերազմական գործոց պարապողներուն
անսովոր դժբաղդութիւն մը ըլլայ աս ,
բայց ճշմարտապէս կարելի է որ աս երկրին
բնութեանը տեղեկութիւն չունեցող աս
պատակիչ բանակ մը աս տատակներէն
զերի բռնըվի փախչելու ժամանակ չի գը-
տած : Եւ միւր չանցած աս տեսարանը կըր-
կին յանկարծ փոփոխութեան մը տակ կել-
նայ . տատակները մէկէն իրենց պարար-
տութիւնը ու կանաչութիւնը կը կորսնցու-
նեն . գլուխին կը խոնարհի , տերեւներին
կը զոդըղայ՝ ու կը թարշամի , բուններին
կը սնանայ ու կը չորնայ , ու մէկգմէկու դար-
նըվելով կըսկըսին կուռիլ հովերուն դէմ ,
մինչև որ ստտիկ մըրիկ մը գետինը կործա-
նէ զանոնք , ուր որ շուտով կը փոխն ու ան-
բեւոյթ կը լլան . անատենը առուոյտը կըսկը-
սի ելլալ , ու գետինը դարձեալ կը կանաչ-
նայ :

Կացին . պալէս : Կաղնի . Բէլէ : Եւ ուրոյտ . Եւն-
ճա :

Յո՛ւնիստէն Գլխաւոր Երկրորդ Երազ :
Թիւ 1:

Եւ հաշակաւոր հեղինակիս առաջին երազը Հոտեմարանիս ընթերցողներուն հաշիւ ըլլալը տեսնալով՝ ու անոր երկրորդ երազին ալ ծանօթանալու համար քանի մը անձանց ըրած խնդիրքին զիջանելով՝ և մեր խոստումն ալ միտքերնիս բերելով, ահա ևս սիկ կրակըսինք իւրաքանչիւր թիւի մէջ հատուած հատուած յաջորդաբար հրատարակել զանիկա: Երբ՝ ասանկ կրակըսի մեր Երազախօսը իր երկրորդ երազը պատմելու:

Երազախօս Երկրորդ:

Եւտեն մը առաջ՝ Բրիտանիանոս ճանապարհորդին ու զէպի Երկնային քաղաքը իր ըրած վտանգաւոր ճամբորդութեանը վրայով իմ տեսած երազս ձեզի պատմելով՝ ինծի հաճելի էր, ու ձեզի շահեկան: Եւստենն ըսի ձեզի նաև ինչ որ իր կնկանը ու զուկրներուն վրայով տեսեր էի, ու թէ ինչպէս զժկամակ էին անոնք իր հետը ճամբորդութեան ելլալու. անանկ որ ինքը պարտաւոր էր առանց անոնց իր ճամբան երթալու. ինչու որ ինքը չի համարձակեցաւ իր անձը կործանման վտանգին տակը ձգել, որն որ կրկանապէս թէ կործանման Բաղաքը մնալովը պիտի դարձնէր. անոր համար ինքը ձգեց զանոնք ու մեկնեցաւ գնաց, ինտոր որ անտեսներ ձեզի պատմեցի:

Երբ՝ եղաւ որ բազմապատիկ գործաւ նութիւններով մեծապէս արգիլվեցայ ու ետ մնացի իմ սովորական ճամբորդութիւններս ընել զէպի ան կողմերը՝ ուսկից ինքը ելաւ, ու անանկով մինչև հիմայ պատեհութիւն մը չի կրցի ունենալ այլ ևս հարցցուփորձ ընել անոնց վրայովը՝ որոնք որ ինքը ետ ձգեց, որ կարող ըլլայի անոնց վրայով լուր մը տալ ձեզի: Բայց մօտերս ան կողմը գործ մը պատահած ըլլալով, նոյնքէն զէպի հոն իջայ. ու նոյն տեղէն մղոնի մը չափ հեռու՝ անտառի մը մէջ ընելով իմ իջևանս, երբոր քնացայ՝ նորէն երազ մը տեսայ:

Եւ ահա երազիս մէջը տեսայ որ ծերունի մարդ մը եկաւ հասաւ ան տեղը՝ ուր որ ես պառկեր էի. և որովհետեւ ինքը քիչ մը տեղ իմ ճամբորդութիւն ըրած ճանապարհ

հէս պիտի երթար, ինծի անանկ թուեցաւ թէ ելայ ու իր հետը գացի: Աստի երբոր մէկտեղ կըքալէինք, ճանապարհորդներուն սովորութեանը պէս՝ ինծի անանկ եկաւ թէ մէկ խօսակցութեան մը մօտանք, ու մեր խօսակցութիւնը պատահեցաւ ըլլալ Բրիտանիանոսին ու իր ճամբորդութիւններուն վրայ. որ ասանկ սկսեցի խօսակցել ծերունի մարդուն հետ:

Պարոն, ըսի իրեն. ի՞նչ քաղաք է սա՞ որ վարը մեր ճամբուն ձախ կողմը կիյնայ: Պատասխան տրեալ պարոն Աւշինութիւնը. (քանզի սա էր իր անունը.) Եւտեն է կործանման Բաղաքը, որ բազմամարդ տեղ մըն է. բայց շատ վատաբարոյ ու ծոյլ ժողովուրդ մը ունի:

Ես ալ կրկարծէի թէ ատիկա ան քաղաքն է՝ ըսի իրեն. ես ինքնա ատենօք անկեց անցայ. և անոր համար գիտեմ թէ անոր վրայով քու ըսածդ ճշմարիտ է:

Աւշինութիւն. Խիստ ճշմարիտ է. երանի թէ անոր մէջը բնակողներուն վրայ բարի խօսելով ճշմարիտը խօսած ըլլայի:

Պարոն. ես կիմանամ որ դուն բարեմիտ մարդ մըն ես, ու կըհաճիս ըսել ու խօսել ինչ որ բարի է: Երբօք չի լսեցիր ինչ որ պատահեցաւ ատեն մը առաջ սա քաղաքիս մէջէն մէկ մարդու մը՝ որուն առունը Բրիտանիանոս էր, որ վեր զէպի բարձրագոյն երկիրները երթալու համար ճամբորդութեան ելաւ:

Աւշինութիւն. Եւտեն լսեցի. ու լսեցի ևս ան վիշտերը՝ նեղութիւնները՝ պատերազմները՝ գերութիւնները՝ աղաղակները՝ հեծութիւնները՝ սարսփները ու վախերը ուրոնք ինքը պատահեցաւ, և որոնք ինքը քաջեց սա ճամբորդութեանը մէջ: Եւսկից ի վատ պէտք է որ ըսեմ քեզի թէ ինքը բոլոր մեր երկրին մէջը լսվեցաւ. շատ քիչ տուններ կան որ լսեցին իր վրայովը և իր ըրածները՝ ու իր ճամբորդութեանը պատմութիւնը չի փնտրուեցին ու չըստացան. մանաւանդ կրնամ ըսել թէ իր վտանգաւոր ճամբորդութիւնը շատ փափաքողներ տալցաւ իր ճամբաներուն. քանզի թէպէտ և ինքը հոս եղած ատենը ամէն մարդու բերանն էր իբրեւ յիմար մէկը, բայց հիմայ որ ինքը գնաց՝ ամէնն ալ մեծապէս կըգո

վաբանեն զինքը : Ինչու որ կրավի թէ ինքը փառաւորապէս կապրիկոր իր եղած տեղը . ու շատերը կան՝ որ թէպէտ միտքերնին հաստատած են ինքըզինքնին բնաւ անոր պէս վտանգներու տակ չի ձգել , բայց իրենց բերանը կը ջրոտիկոր անոր ըրած յաղթութիւններուն վրայ :

Թէ որ ճշմարիտը կուզեն խորհիլ նէ , իրաւ կրնան խորհիլ որ ան հիմայ իր եղած տեղը աղէկ կապրիկոր . ըսի անոր : Ինչու որ ինքը հիմայ կենաց Լղբիւրին քովը ու անոր մէջը կապրիկոր , ու բոլոր իր ունեցածը՝ աւանց աշխատանքի ու առանց տրտմութեան ունի , որովհետեւ անոր հետը տրտմութիւն խառնելով չէ : Բայց կաղաչեմ , ժողովուրդը ի՞նչ կըխօսի իր վրայ :

Ուշիւ-Լիւն . Դողովուրդը սքանչելի բաներ կըխօսի իր վրայ . ոմանք կըսեն՝ թէ ինքը հիմայ ճերմակներով հագված կը պլտրտի * , թէ իր վիզը ոսկի մանեակ մը ունի , թէ իր գլուխը մարգատաշար ոսկի թագ մը ունի . ուրիշները կըսեն՝ թէ իր ճամբորդութեանը մէջ երբեմն իրեն տեսնելով լուսաւորները իր ընկերները եղեր են , ու թէ ինքը իր եղած տեղը անանկ ընտանեացած է անոնց հետ՝ ինտոր որ հոս մէկ զրադին մէկալին հետը կընտանենայ : Եւկից ՚ի դատ՝ առանց երկբայութեան կըհաստատուի իր վրայովը՝ թէ իր եղած տեղին թագաւորը պալատին մէջը արդէն շատ հոյակապ ու զուարճալի բնակարան մը ընծայեր է իրեն , ու թէ ինքը անոր հետը կուտէ ու կըխմէ ու կըխօսի ու կըպլտրտի , ու անոր քաղցր դէմքը կըտեսնայ ու անոր սէրը կըվայելէ՝ որ հոն ամէնուն դատուելուն է † : Կան ումանք կըլուսան թէ իր թագաւորը՝ ան երկրին Տէրը , շատ չանցած սա կողմերս պիտի գայ , ու պիտի իմանայ պատճառը՝ թէ որ կրնան պատճառ մը տալ , թէ ինչու համար իր ընկերները այնչափ քիչ բանի տեղը զին ու այնչափ արհամարհեցին զինքը , երբոր իմացան թէ ինքը ճամբորդ պիտի ըլլար ‡ : Բանդի կըսեն՝ թէ ինքը հիմայ այնչափ իր թագաւորին աջքը մտած է , թէ իր Տէրը այնչափ վշտացած է Բրիտտիանոսին ճամբորդութեան ելած ատենը

անոր վրայ ձգված նախատինքներովը , որ բոլորը իրեն եղած պիտի սեպէ * . ու ասոր վրայ զարմանալու չէ . ինչու որ իր թագաւորին վրայ ունեցած սիրոյն համար էր որ ինքը անանկ վտանգներու մէջ ձգեց իր անձը :

Համարձակութեամբ կըսեմ՝ թէ ուրախ եմ ասոր վրայ . ըսի մարդուն : Ուրախ եմ ան խեղճ մարդուն վրայ , անոր համար՝ որ ինքը հիմայ իր աշխատութեան հանգչեցաւ , ու անոր համար՝ որ իր արցունքներուն պտուղը ուրախութեամբ կըքաղէ , ու անոր համար՝ որ իր թշնամիներուն զէնքին զուրթեան անդին անցաւ , ու իր ատելիները չեն կրնար հանիլ իրեն † : Ուրախ եմ նաեւ որ սա բաներուն լուրը սա երկրիս մէջը տարածեցաւ . Ո՛վ գիտէ , կրնայ ըլլալ որ ասիկա աղէկ ազդուութիւն մը ընէ ոմանց վրայ՝ որ ետեւը մնացած են : Բայց քանի որ միտքս է՝ կըխնդրեմ պարոն , բան մը կըլըսեմ իր կնկանը ու զուկըներուն վրայ : Խեղճ անձինք . արդեօք ի՞նչ կընենկոր աւնոնք :

Ուշիւ-Լիւն . Ո՛վ . Բրիտտիանոս ու իր տղաքը : Կերեւայ թէ անոնք ալ անանկ պիտի ընեն՝ ինտոր որ ինքը Բրիտտիանոս ըլլաւ . ինչու որ թէպէտ և տուաջ բոլորը յիմարութիւն ըրին , ու ամենեւին չէին ուզեր համոզվիլ Բրիտտիանոսին թէ արցունքներովը և թէ աղաչանքներովը , բայց ետքի խորհուրդներնին զարմանալի ներդուծութիւն մը ըրաւ իրենց վրայ . ստանկով՝ ժողովրդեցան , ու իրենք ալ անոր ետեւէն դացին :

Հատ լաւ , շատ լաւ . կանչեցի ես . բայց՝ ինչ . կնիկը ու տղաքը՝ ու բոլորը գացին մի :

Ուշիւ-Լիւն . Ճշմարիտ է որ դացին . կրնամ ես սա բանին պատմութիւնը քեզի ընել , ինչու որ նոյն ատենը հոն էի ես , ու բոլոր բանին վրայ կատարեալ տեղեկութիւն ունիմ :

Ուրեմն մէկը կրնայ պատմել սա բանը , ճշմարիտ պատմութիւնի մը պէս . ըսի իրեն :

Ուշիւ-Լիւն . Սի վախնար համարձակ հաստատութիւն անիկա . քեզի ըսի որ բոլորն ալ ճամբորդութեան ելան . տանտիկինն

* Գայգ . 7 . 4 : † Օս . 7 : ‡ Ղ . 14, 15 :

† Գայգ . 7 . 15 :

* Ղ . 7 . 16 : † Գայգ . 7 . 13 : Սայ . 5, 6 :

ալ՝ ու իր չորս տղաքն ալ : Կը որովհետեւ խել մը ճամբայ մէկտեղ երթալու ենք՝ ին տոր որ կիմանամ, բոլոր բանին վրայով քեզի տեղեկութիւն մը պիտի տամ :

Կա Վրիստինէն (քանզի աս էր իր ա նունը ան օրէն ետքը՝ որ իր զաւկընէրուն հետը ճանապարհորդի մը կեանք վարելու սկսեց .) իր էրեկը գետէն անցնելէն ետեւ՝ ու ալ որ չէր կրնար լսել անոր վրայովը՝ սկսեց իր մաքին մէջը գորաւոր խորհուրդներ ունենալ : Կախ և առաջ որ իր էրեկը կը կորսնցուց, ու որ ան ազգակցութեան սիրելի կապը բոլորովին կորեցաւ իրենց մէջէն : Վանդի գիտեա՛ ըսաւ ինձի մարդը , որ ընտելիւնը բարեկամութիւն ծանր խորհուրդներով կը բեռնաւորէ ողջ մնացողը՝ սիրելի ազգակցութիւններուն կորստեանը յիշատակութիւնովը : Ուստի ասիկա իր էրեկանը համար շատ արցունք թափել տուաւ իրեն : Բայց բոլորը աս չեղաւ . Վրիստինէ սկսեց ինքնիրենը մտածել և՛ թէ արդեօք իր էրեկանը հետ անպատշաճ վարմունք ունենալը չէ՞ր մէկ պատճառ որ ալ անիկա չի տեսաւ , և որ աս կերպով քա անիկա իրմէն հեռացաւ : Ու ասոր վրայ յաճախութեամբ իր մտքին մէջը լեց վեցան բոլոր իր անմարդի անասնական ու ամբարիշտ վարմունքները՝ որ իր սիրելի բարեկամին ցուցուցած էր , որոնք նաեւ իր խղճմունքին վրայ զիգվեցան , ու յանցաւորութիւնով զինքը բեռնաւորեցին : Կա նապէս շատ նուաճեցաւ ինքը՝ յիշելով իր էրեկանը անդադար հեծութիւնները , աղի ողորմ արցունքները ու իր անձին վրայ ողբալները . և թէ ինչպէս իր սիրտը կարծրացուցեր էր անոր աղաչանքներուն ու սիրալի յորդորանքներուն դէմ երբոր կը համոզէր զինքը ու իր տղաքը որ իր հետը երթան : Վանաւանդ թէ՛ ինչ որ Վրիստինէ նոս ըսեր էր իրեն՝ ու ինչ որ ըրեր էր իր առջեւ բոլոր ան միջոցին մէջ որ իր բեռը կանակէն կախված էր , բոլորն ալ կայծակի պէս իր վրայ կը դառնային , ու իր սրտին մաշկը երկուք կը պատուէին . ամէնէն էվել՝ մեծապէս կը հնչէին իր ականջներուն անոր ան ցաւազին աղաղակը , թէ՛ « Ի՞նչ պիտի ընեմ որ փրկըվիմ » :

Ուստի իր տղոցը ըսաւ . տըղաք , մենք ամէննիս ալ կործանած ենք : Կա իմ մեղ-

քիս պատճառաւը ձեզ կորսնցուցի , ու ինքը ձեռքէ ելաւ : Ինքը կողմը որ մեզ ալ իր հետը առնէ , բայց ես ինքնա չուզեցի երթալ ու ձեզ ալ չի թողուցի : Ասոր վրայ բոլոր տղաքը սկսեցին լալ , ու կը կանգնէին թէ իրենց հօրը ետեւէն կերթան : Կրանի թէ (կըսէր Վրիստինէ) միւր վիճակին ինչ կամ ըլլար անոր հետը երթալը . անատենը մեր բանը աղէկ պիտի ըլլար , քան որչափ հիմայ հաւանական է ըլլալ : Ինչու որ՝ թէ պէտ և առաջուց յիմարաբար կը կարծէի թէ ձեր հօրը նեղութիւնները մէկ ցնորեալ երեւակայութենէ մը կը ծագէին՝ կամ թէ ինքը մեղամաղձային այլանդակ խորհուրդներով լցված էր , բայց հիմայ իմ մտքէս դուրս չելար թէ անոնք ուրիշ պատճառէ ծագած էին , այսինքն՝ թէ կենաց լոյսը իրեն տրված էր * , որուն օգնականութիւնով կը կարծեմ թէ ինքը ազատեցաւ մահուան որոգայթներէն † : Կնատեն ամէնն ալ կրկին սկսեցին լալ , ու կանչել , թէ՛ մի , վայ ան օրվանը :

Հետեւեալ զիշերը Վրիստինէ երազ մը տեսաւ . ու կը թուէր իրեն թէ աս հա մեծ զիւրք մը բացվեցաւ իր առջեւ , որուն մէջը բոլոր իր վարքը գրված էր . ու անանկ կուգար իրեն թէ իր յանցանքները շատ աղետալի կերեւային իր վրայ : Կնատեն բարձր ձայնով կանչեց իր քունին մէջը , թէ « Խոտուած՝ ներքէ ինձի մեղաւորիս » ‡ . ու իր փոքրիկ զաւկները իր ձայնը լսեցին :

Կսկէ ետեւ անանկ կը թուէր իրեն թէ իր անկողինին քովը երկու հատ խիստ դարձելի անձինք կայներ էին՝ ու կըսէին , Ի՞նչ պիտի ընենք աս կնիկը . ինչու որ ինքը կարթըննայ ու կը քնանայ՝ ու ողորմութեան համար կաղաղակէ . թէ որ ձգենք զինքը որ սկսածին պէս առաջ երթայ , պիտի կորսնցունենք զինքը՝ ինտոր որ իր էրեկը կորսնցուցինք : Ուստի պարտինք որ և իցէ ճամբով ջանալ՝ որ իր միտքը դարձունենք աս կերպը խորհուրդներ ունենալէն ասկից ետքը . չէնք բոլոր աշխարհ բան մը չի կըրնար ընել , հապա ինքը ճամբորդ պիտի ըլլայ :

Կա միջոցիս Վրիստինէ տըրթնցաւ քրտինքի մէջ թաղված ու իր վրայ դող մը

* (Կով. Թ. 23—25 ; Հով. Ը. 12 ; Իս. 47. 27. Իվ. 1. 13 :

կար . բայց ատենէ մը ետեւ կրկին իր քու նը տարաւ : Ու կը թուէր իրեն թէ իր էրիկը . Վրիստիանոսը տեսաւ , որ երջանիկ տեղ մը բազմաթիւ անմահներու մէջն էր՝ ձեռքը քնար մը բռնած , ու կայներ և կը նուագէր ան քնարը Մէկու մը սուջէն՝ որ ակնաբեր մը վրայ նստած էր , ու իր գլխուն բոլորովը ծիածան ունէր : Տեսաւ ևս որ իբր թէ իր գլուխը ու դէմքը իր թագաւորին ոտքը խոնարհեցուց ըսելով , « Սրտի մտքը շնորհակալ եմ իմ Տէրոջս ու իմ թաղաւորիս զիս աս տեղը բերելուն համար » : Եւ նաեւ իր բոլորովը կայնողներուն բազմաթիւնը ցնծութեան ձայներով երգեցին՝ ու իրենց քնարներովը կընուագէին . բայց կենդանի մարդ կարող չէր հասկընալ անոնց ըսածը , բայց ի Վրիստիանոսէն ու իր ընկերներէն :

Հիտեհալ աւտուռն երբոր ինքը արթնցաւ՝ աղօթք ըրաւ առ Մատուած՝ ու ատեն մը իր զաւկըներուն հետը որ խօսեցաւ , մէկը իր դուռը սաստիկ մը չալեց , որուն Վրիստիանէ ըսաւ . « Թէ որ Մատուծոյ անունովը կուգասկոր , մտիւր ներս » : Պատասխան տըւաւ մարդը ու ըսաւ՝ « Լմէն » . ու դուռը բացաւ և բարեկեց անիկա՝ ըսելով , « Կաղաղութիւն աս տան » : Եւսկա կատարելէն ետեւ ըսաւ , « Վրիստիանէ , զի տես թէ ինչու համար եկայ ես » : Եւ նաեւ նը Վրիստիանէ ամենալուսն կարմրեցաւ ու կըրտար . իր սիրտն ալ սկսեց ջերմանալ փափաքներով ցանկալ՝ որ զիտնայ թէ ուրկից եկեր է ինքը , ու ի՞նչ պատգամ բերեր է իրեն : Ու ըսաւ հիւրը իրեն . Իմ անունս զաղտնիք է , ու կըրնակիմ անոնց հետը՝ որ վերերն են : Իմ եղած տեղս կը խօսվիկոր՝ թէ դուն բաղձանք մը ունիս եղեր հոն երթալու . նաև կը խօսվիկոր՝ թէ դուն կը ճանչնասկոր հիմայ ան չարիքը որն որ սուսջուց քու էրկանդ հասցուցիր , անոր բռնած ճամբաներուն դէմ քու սիրտդ կարծրացունելով , ու աս տղաքը իրենց տգիտութեանը մէջ պահելով : Վրիստիանէ , Լմենողորմը խրկեց զիս որ քեզի զոռցեմ՝ թէ ինքը ներող Մատուած է , ու մեղքերու թողութիւն շնորհելը իր բերկըութիւնն է : Կուգէ ևս որ զիտնաս՝ թէ իր ներկայութեանը երթալու ու իր սեղանը

նստելու կը հրաւիրէկոր քեզ , ու պիտի կերակրէ քեզ իր տանը պարարտութիւնովը՝ ու քու հօրդ հակոբին ժառանգութիւնովը : Լմէն է Վրիստիանոս՝ ան որ քու էրիկդ էր , իր բազմաթիւ ընկերներուն հետ , որ կընայի միշտ ան երեսին՝ որ կենդանութիւն կընծայէ նայողներուն . ու անոնց ամէնը ուրախ պիտի ըլլան՝ երբոր լսեն քու Հօրդ սեմին վրայ կոխելու քու ոտքերուդ ձայնը » :

Վրիստիանէ ասոր վրայ մեծապէս կը պատկաւէր իր անձին մէջ , ու իր գլուխը դէպի գիտիներ կը խոնարհեցունէր : Բայց իր հիւրը առաջ տարաւ իր խօսքը՝ ըսելով . « Վրիստիանէ , քեզի գիր մըն ալ կայ , որ քու էրկանդ թագաւորէն բերեր եմ » . ուստի ինքը առաւ անիկա՝ ու բացաւ . բայց անիկա անուշահոտ իւղի մը պէս հոտ մը կը բուրէր * : Եւսեւ ոսկեղէն գիրերով գրուած էր ան : Գիրին մէջը պարունակված խօսքը աս էր , թէ թագաւորը կուգէ իր մէն՝ որ իր էրկանը ըրածին պէս ընէ . ինչու որ իր քաղաքը երթալու՝ ու յաւիտեան ուրախութեամբ իր առջևը բնակելու ճամբան անիկա է : Վրիստիանէն բոլորովին նուաճեցաւ ասով , ու բարձր ձայնով կանչեց իր հիւրին . « Տէր իմ , կը կամի՞ս տանել զիս քու հետդ՝ ու իմ զաւկըներս , որ մենք ևս երթանք ու թագաւորին երկիր պաղութիւն ընենք » :

Պատասխան տըւաւ հիւրը . Վրիստիանէ , լեղին անուշէն առաջ է . նեղութիւններով պարտիս մոնալ Լըրկային Վաղաքը , ինտոր որ քեզմէ առաջ գացողը մտաւ : Եւսեւ որոյ խրատ կուտամ՝ քեզի որ քու էրկանդ Վրիստիանոսին պէս ընես : Գնա ան տեղի նեղ դուռը՝ դաշտին մէկալ կողմը . քանզի անիկա տն ճամբուն գլուխն է՝ ուրկից պիտի վեր ելլաս դուն . ու բարի յաջողութիւն կը խնդրեմ քեզի : Եւսեւ կը խրատեմ քեզ որ աս գիրը ծոցդ դնես , որ անոր մէջինը դուն քեզի ու զաւկըներուդ կարգաս , մինչև որ բերնանց սօրվիք անիկա . քանզի անիկա ան երգերուն մէկն է , որ դուն պարտիս երգել քանի որ աս քու պանդխտութեանդ տանը մէջն էս † . նաև միւս դուռը հասնելուդ ասիկա պարտիս ներս տալ :

* Լըր. Թ. 3 : † Սպիտ. ԺԺԹ. 54 :